ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 14 մարտի 2016թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝

փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները :

Նիստին հրավիրված են Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և դրանից բխող հանրապետական և մարզային միջոցառումների վերաբերյալ/ զեկուցող փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյան/

2.Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ծրագրերը 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու վերաբերյալ:

Քննարկեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ՀՀ Վայոց ձորի մարզում 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և դրանից բխող միջոցառումների վերաբերյալ մարզային և հանրապետական ծրագրերը, պատասխանատուներին և նշեց կատարման ժամկետները:

<<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն>> ՀԿ-ի փոխնախագահ Խնկանուշ Մարկոսյանը, <<Շուշան>>ՀԿ-ի նախագահ Նարինե Հախվերդյանը, <<Հույս 98 >> ՀԿ-ի նախագահ Ա.Սաֆարյանը ներկայացրեցին իրենց ծրագրած աշխատանքները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հսկողություն սահմանել 2016թ-ը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հայտարարելու վերաբերյալ մարզային ծրագրի կատարման ընթացքին և ժամկետներին:
2. Համագործակցել մարզի ՀԿ- ների հետ ծրագրերի իրագործման գործում:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար Ց.Բաբայան

14.03.2016թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ք.Եղեգնաձոր 03 մայիսի 2016թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամներ՝

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, քարտուղարության պետ Հայկ Կարապետյանը, ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանը, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանը, <<Հույս 89>> ՀԿ-ի նախագահ Ալմաստ Սաֆարյանը, <<Շուշան>> ՀԿ-ի նախագահ Նարինե Հախվերդյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Ց. Բաբայանը /քարտուղար/ , ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Ա.Սահակյանը, <<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտման կենտրոն>> ՀԿ –ի փոխնախագահ Խնկանուշ Մարկոսյանը, << Խելացի մանուկ >> մանկական զարգացման կենտրոնի դաստիարակ Նարինե Դավթյանը:

Նիստին հրավիրված են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ. Գևորգյանը, վարչության պետի տեղակալ Ս.Շահբազյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1 Մայիսի 9-ի, մայիսի 28 առիթով կազմակերպվող միջոցառումների նախապատարաստական աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց համար: /զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյան/:

2. 2013-2016 թվականների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների ենթատեքստում իրականացված աշխատանքների վերաբերյալ /զեկուցող հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան/:

3.Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը վերաբերող օրենսդրության հանրային իրազեկում /Վարդաձոր թերթի խմբագիր Ս.Դովլաթյան, ՀԿ- ներ/

Հանձնաժողովը որոշեց՝

1. Նախապատրաստական աշխատանքներ տանել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ մայիսյան միջոցառումների կազմակերպման համար:

2. 2013-2016 թվականների ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում <<Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների ենթատեքստում իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկույցը ուղարկել ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ՏԿՀՆ:

3. Մարզի լրատվամիջոցների, ՀԿ-ների և համայնքապետարանների հետ համատեղ հրապարակային լուսաբանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը վերաբերող օրենսդրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար Ց.Բաբայան

03.05.2016թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ք.Եղեգնաձոր 03 օգոստոսի 2016թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը

հանձնաժողովի անդամներ՝

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, քարտուղարության պետ Հայկ Կարապետյանը, ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանը, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանը, <<Հույս 89>> ՀԿ-ի նախագահ Ալմաստ Սաֆարյանը, <<Շուշան>> ՀԿ-ի նախագահ Նարինե Հախվերդյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Ց. Բաբայանը /քարտուղար/ , ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության Եղեգնաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ Ա.Սահակյանը, <<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտման կենտրոն>> ՀԿ –ի փոխնախագահ Խնկանուշ Մարկոսյանը, << Խելացի մանուկ >> մանկական զարգացման կենտրոնի դաստիարակ Նարինե Դավթյանը:

Նիստին հրավիրված են մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ. Գևորգյանը, վարչության պետի տեղակալ Ս.Շահբազյանը, Եղեգնաձորի զբաղվածության կենտրոնի գլխավոր մասնագետ Ս.Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Զբաղվածության պետական ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրվածության մասին:/Ս.Ավետիսյան/

2. Պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներին ցույց տրվող բուժօգնության և նրանց դեղորայքով ապահովելու վիճակը մարզի բուժ.հաստատություններում:/Ս.Շահբազյան/

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագիրը /Մ.Հարությունյան/:

4. Կազմակերպչական այլ հարցեր

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մարզի լրատվամիջոցների, համայնքապետարանների հետ համատեղ հրապարակային լուսաբանել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերը:

2. Հսկողություն սահմանել պետական պատվերի շրջանակներում հաշմանդամներին ցույց տրվող բուժօգնության և նրանց դեղորայքով ապահովելու գործընթացի նկատմամբ:

3. Հավանություն տալ <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագիրին>> և գրությունը ուղարկել ՀՀ ՏԿԶՆ:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Քարտուղար Ց.Բաբայան

03.08.2016թ.